

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՊՐՈՖՏԵՍՏ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2026/16-15-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
155	adeor	nxt	adeor Medical AG	<p>Անևրիզմայի տիտանե կլիպսեր (մշտական և ժամանակավոր, ստանդարտ և մինի) Անևրիզմայի կլիպսերը նախատեսված են Նեյրովիրաբուժական միջամտությունների ընթացքում գլխուղեղի անոթային անևրիզմաների շեղբի մեխանիկական փակման համար: Մշտական կլիպսերը կիրառվում են անևրիզմայի վերջնական փակման նպատակով: Ժամանակավոր կլիպսերը կիրառվում են անոթների ժամանակավոր օկյուզիայի համար վիրահատության ընթացքում: Կիրառման ոլորտ • Նեյրովիրաբուժություն • Միկրովիրաբուժություն • Գլխուղեղի անևրիզմայի վիրաբուժություն Տեխնիկական բնութագրեր Նյութը՝ Բժշկական տիտանե համաձուլվածք Ti 6Al 4V, ISO 5832 3 ստանդարտին համապատասխան, բիոհամատեղելի և MRI համատեղելի մինչև 3 Տեսլա: Կոնստրուկցիոն</p>

առանձնահատկություններ Լազերային եռակցված շառնիրային համակարգ, սիմետրիկ փակվող շեղբեր, առավելագույն բացման սահմանափակում, անհատական սերիական համար և կայուն փակման ուժ: Շեղբերի մակերեսն ունի ատրաումատիկ միկրոնախշ՝ կանխելով սահքը և ապահովելով հավասար ճնշման բաշխում: Չափային պարամետրեր՝ Ստանդարտ մշտական՝ բացում մոտ 5.4 13.3 մմ, ուժ՝ 1.47 1.96 N: Մինի մշտական՝ բացում մոտ 3.2 7 մմ, ուժ՝ 1.08 1.28 N: Ստանդարտ ժամանակավոր՝ բացում մոտ 5.4 13.3 մմ, ուժ՝ 0.88 1.28 N: Մինի ժամանակավոր՝ բացում մոտ 3.2 7 մմ, ուժ՝ 0.69 0.88 N: Փաթեթավորում և ստերիլություն Նույնականացման պիտակներով: Կրկնակի օգտագործման, ստերիլիզացվող: Անվտանգության պահանջներ՝ Մեկանգամյա օգտագործման, CE և ISO սերտիֆիկացված, իմպլանտացիոն բժշկական սարքերի պահանջներին համապատասխան: Մատակարարման ամբողջականություն՝ Մատակարարումը պետք է ներառի բոլոր տեսակների կլիպսերի ամբողջ տեսականին՝ տարբեր չափերով և ձևերով: Մատակարարը պարտավորվում է տրամադրել անևրիզմայի տիտանե կլիպսերի ամբողջական հավաքածու՝ ներառյալ մշտական և ժամանակավոր, ստանդարտ և մինի չափսերը: Տրամադրված ամբողջական հավաքածուն պահվում է բժշկի մոտ՝ պայմանագրի ողջ ընթացքում: Բժիշկը վիրահատության ընթացքում որոշում է կիրառվող չափսը: Օգտագործված կլիպսերը ենթակա են պարտադիր լրացման

				<p>մատակարարի կողմից՝ հավաքածուի ամբողջականությունը պահպանելու նպատակով: Վիրահատությունից հետո չօգտագործված կլիպսերը մատակարարը հետ է վերցնում: Կլիպսերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ, իսկ հանձնման պահին պիտանելիության ժամկետը պետք է կազմի ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը: Մատակակարը պարտավոր է ողջ պայմանագրային ժամկետում տրամադրել բոլոր չափերի և տեսակների կլիպսերը տեղադրող և հեռացնող արքանները (գործիքները):</p>
--	--	--	--	---

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ПРОФТЕСТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕЦДЦПДР-2026/16-15-БПРЗ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
155				